ԿԻԼԻԿԻԱՅԻ ԴԱՍԵՐԸ.
ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

DOI: 10.52174/2579-2989_2023.2-135

Սկիզբը՝ նախորդ համարում
(https://asue.am/upload/files/amberd/2023-year-1/12.pdf)

Քաջությունը ունենանք խորհելու և նաև քաջությունը ունենանք համարձակելու:

Կոստան Զարյան

Հիմնաբառեր. *Կիլիկիայի իշխանապետություն, Հայ առաքելական եկեղեցի, ներազդող խմբեր, արտաքին միջավայր, ներքին միջավայր*

Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանատնտեսագիտական ֆակուլտետը: 1980-1982 թթ. ծառայել է խորհրդային զինված ուժերում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2019 թթ. դասավանդել է ՀՀ կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում:

2019 թվականից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող է:

Երկու տասնյակից ավել գիտական, վերլուծական հոդվածների և 2 մենագրության հեղինակ է:

https://orcid.org/0000-0001-9014-5892

Հոդվածի երկրորդ մասում՝ Կիլիկյան Հայաստանում իշխանապետության ծագման ու կենսագործունեության համատեքստում, փորձ է արվել վերլուծելու և բացահայտելու տվյալ ժամանակահատվածում տարածաշրջանում տեղի ունեցող խորքային ու վճռորոշ գործընթացների տրամաբանական շղթան: Տարածաշրջան, որտեղ Բյուզանդիայի կայսրության ազդեցությունը սկսում էր զգալիորեն թուլանալ՝ տեղը զիջելով հատուկ կրոնական ուղղվածության և ռազմաքաղաքական բնույթի միջազգային միավորմանը, որը պատմությանը հայտնի է «խաչակիրներ», իսկ նրանց ծրագիրը՝ «Խաչակրաց արշավանք» անվանմամբ: Դեպի տարածաշրջան խաչակրաց 9 արշավանքի նպատակը եվրոպական խոշոր պետությունների և կրոնական որոշակի կառույցների կողմից մշակված մեծ նախագծի իրականացումն էր, որը ենթադրում էր գործող աշխարհակարգի կառավարման սկզբունքների ինչ-ինչ փոփոխություններ՝ կրոնական, ռազմաքաղաքական և տնտեսական ոլորտներում:

Հաշվի առնելով ժամանակագրական գործոնը՝ առանձնացվել են արտաքին և ներքին միջավայրերը, որտեղ տեղի ունեցող գործընթացներն անմիջական ազդեցություն են ունեցել Կիլիկիայի իշխանապետության ձևավորման վրա: Այս համատեքստում վերլուծվել է ներքին միջավայրի հիմնական ազդեցիկ միավորի՝ Հայ առաքելական եկեղեցու գործունեությունը՝ կառույցի պահպանման շարժառիթների և սկզբունքային դիրքորոշումների տեսանկյունից:

Հաջողության առագաստը

Իշխանապետության ծնունդը և ապա դեպի թագավորություն տանող Կիլիկյան Հայաստանի ուղին դասական

օրինակ են այն բանի, թե ինչպես կարելի է նպատակների ծառ կառուցել և հասնել բաղձալիին, երբ, կարծես թե, ամեն ինչ ընթանում է բոլորովին այլ կերպ:

X-XI դարում այն երկրամասում, որի հենքի վրա կառուցվեց Կիլիկիայի մեծ իշխանապետությունը, հայ բնակչությունը բավական ստվար էր, իսկ որտեղ առկա էր հայ մարդը, ինքնաբերաբար առկա էր նաև հայոց եկեղեցին: Հետևաբար՝ անհրաժեշտ է արձանագրել, որ մինչև Կիլիկիայի իշխանապետության ծնունդը տվյալ տարածաշրջանում արդեն իսկ ակտիվ դերակատարում ուներ Հայ առաքելական եկեղեցին, որի հավաքական գոյությունը հատկապես Բագրատունյաց թագավորության անկումից հետո վտանգված էր բյուզանդական ուղղափառ «մամլիչի» կլանիչ ու ագրեսիվ քաղաքականության պատճառով, որից խուսափելու նպատակով Ամենայն հայոց կաթողիկոս Խաչիկ Ա Արշարունու անմիջական ջանքերով Անտիոքում, Տարսոնում, Իսավրիայում[1] և այլուր նշանակվեցին եպիսկոպոսներ՝ որպես նախկին թագավորության սահմաններից դուրս եկեղեցու միասնականության պահպանման գործընթացի շարունակականության ապահովման գրավական[2]:

Իշխանապետության ծնունդի համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին այն ժամանակ, երբ Բյուզանդիան Մանազկերտի ճակատամարտում (1071 թ.) պարտություն կրեց սելջուկ թուրքերից[3], որից հետո հայկական իշխանությունների միավորման և նոր պետության հիմքը դնելու նպատակով Բագրատունի վերջին թագակիր Գագիկ Բ-ի (1042–1045 թթ.) թիկնապահ Ռուբեն իշխանը՝ Ռուբեն Ա-ն (1080–1095 թթ.), սկսեց իրականացնել Կիլիկիայի իշխանապետության հիմնադրման գործընթացը[4]: Այսինքն՝ հայոց թագավորանիստ մայրաքաղաք Անիի անկումից (1045 թ.) ընդամենը երեք ու կես տասնամյակ անց Կիլիկիայում ստեղծվեց հայոց նոր պետականություն, որը կարճ ժամանակահատվածում իշխանապետ Ռուբեն Ա-ի ջանքերով էականորեն լայնացրեց իր տիրապետության սահմանները: Արդյունքում, արդեն 1080 թվականին, հիմնելով անկախ իշխանապետություն, Ռուբեն Ա-ն, ըստ էության, սկիզբ դրեց տարածաշրջանում Բյուզանդիայի գերիշխանության վերացման գործընթացին[5]:

Իշխանապետության կայուն զարգացման հետագա ընթացքն ապահովեցին Ռուբենի ավագ որդի Կոստանդին Ա-ն (1095–1100 թթ.) և ապա թոռը՝ Թորոս Ա իշխանը (1100–1129 թթ.), որոնք, բացի Բյուզանդիայի տիրապետության բեռը թոթափելու գործընթացն ավարտին հասցնելուց, օգտվելով սելջուկ թուրքերի որոշակի թուլությունից ու հապաղումից, Լեռնային Կիլիկիային միացրին նաև Դաշտային Կիլիկիան:

Իշխանապետության հիմքերն ամբողջովին ամրապնդվեցին Մլեհ իշխանապետի օրոք, որը սկզբունքորեն «խմբագրեց» արտաքին քաղաքականության գերակա վեկտորների ուղղությունը՝ հաշվի առնելով մի քանի կարևոր հանգամանք: Նախ՝ Մլեհը, ի տարբերություն մյուս հայ իշխանների, տեսնելով կաթոլիկների ոչ բարեկամական դիրքորոշումը և հույների թշնամանքը իշխանապետության կայացման գործընթացի նկատմամբ, դաշնակիցների ընտրության հարցում կատարեց հայեցակարգային փոփոխություն, որը դիվանագիտական մեծ հեղաշրջում էր տվյալ ժամանակահատվածի համար և քաղաքական կողմնորոշման դիտանկյունից կրում էր որոշակի ռիսկեր՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միջավայրում ընդգծված հակառակորդներ ձեռք բերելու առումով:

Այս քաղաքականության հիմքում նաև այն իրողության իրատեսական գնահատումն էր, որ հայոց եկեղեցական վերնախավի ներուժի գործնական մասնակցությունը իշխանապետության ամրագրման գործում կենսական անհրաժեշտություն

[1] Քաղաքներ, որոնք հետագայում ամրագրվեցին Կիլիկիայի իշխանապետության կազմում:
[2] Ա. Հովհաննիսյան, Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երևան, հեղ. հրատ., 2020, էջ 68:
[3] https://www.academia.edu/28420853/Մանազկերտի_1071_թ_ճակատամարտը:
[4] Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 5, Երևան, 1979, էջ 408:
[5] http://www.encyclopedia.am/pages.php?hId=1307

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Իշխանապետության գործող անձինք և նրանց գործողությունների վերջնարդյունքը[6]

Հ/Հ	Իշխանապետ	Ղեկավարման տարիներ	Ծագումը	Գործողությունների ժամանակացույց
1	**Ռուբեն Ա**	1080–1095 թթ.	Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ Բ-ի (1042–1145 թթ.) թիկնապահ	1080 թ-ին տիրացավ Լեռնային Կիլիկիայի Բարձրբերդ, Կոպիտառ ու Կոռոմոզոլ (Կոլիմոզոլ) բերդերին և վերացրեց Բյուզանդիայի գերիշխանությունը՝ հիմնելով անկախ իշխանություն:
2	**Կոստանդին Ա**	1095–1100 թթ.	Ռուբեն Ա-ի ավագ որդին	**Սելջուկյան թուրքերից և բյուզանդացիներից** ազատագրեց մի շարք հայաբնակ գավառներ, քաղաքներ ու բերդեր: 1098 թ-ին գրավեց ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Վահկա բերդը, դարձնելով այն իշխանանիստ կենտրոն:
3	**Թորոս Ա**	1100–1129 թթ.	Կոստանդին Ա-ի որդին	Իրականացրեց պետության սահմաններն ընդարձակելու ակտիվ քաղաքականությունը: 1104 թ-ին, պարտության մատնելով բյուզանդական զորքերին, ազատագրեց Սիս, Անարզաբա քաղաքները, իր իշխանությանը միացրեց Դաշտային Կիլիկիայի զգալի մասը: 1107 թ-ին Բերդուսի մատույցներում ջախջախեց Կիլիկիա ներխուժած սելջուկ թուրքերին: Սիս քաղաքի մոտ հիմնեց Դրազարկի և Մաշկևորի հռչակավոր վանքերը, որոնք վերածվեցին կրթության և գրչության հայապահպան կենտրոնների:
4	**Լևոն Ա**	1129–1137 թթ.	Թորոս Ա-ի եղբայրը	1132 թ-ին բյուզանդական տիրապետությունից ազատագրեց Մամեստիա, Ադանա, Տարսոն քաղաքները և ծովեզրյա հայաշատ գավառները: 1135–1136 թթ-ին, կռվելով **Անտիոքի դքսության ու Երուսաղեմի թագավորության** դեմ, հաջողությամբ ազատագրեց Կիլիկիայի հարավարևելյան հայաբնակ շրջանները: Խելամտորեն օգտագործելով **սելջուկյան թուրքերի ու խաչակիրների** միջև եղած թշնամանքը՝ առանձին–առանձին ջախջախեց ու վտարեց նրանց Կիլիկիայից:
5	**Թորոս Բ**	1145–1169 թթ.	Լևոն Ա-ի որդին	1137 թ-ին **Բյուզանդիայի Հովհաննես Կոմնենոս կայսրը** Միջերկրական ծովով ներխուժեց Կիլիկիա, գրավեց ողջ Կիլիկիան և գերեվարեց Լևոն Ա-ին ու նրա 2 որդիներին: 1143 թ-ին Լևոն Ա-ի որդի Թորոս Բ իշխանը կարողացավ փախչել գերությունից և, եղբայրների՝ Ստեփանեի ու Մլեհի օգնությամբ համախմբելով հայկական ուժերը, ազատագրեց երկիրը **բյուզանդական ու սելջուկ-թուրքական զավթիչներից և** վերականգնեց 1137 թ-ից ընդհատված Հայոց պետականությունը: Բյուզանդական զորքերի ձախողված արշավանքները կայսրին ստիպեցին հաշտություն կնքել նրա հետ: Իշխանության սահմանները պաշտպանելու համար Թորոս Բ-ն պահում էր 30-հզ-անոց բանակ: Նրա գործունեությունը նշանավորվեց Կիլիկիայի հայկական հողերի միավորման և պետականության ամրապնդման հետևողական քաղաքականությամբ:
6	**Ռուբեն Բ**	1169թ.	Թորոս Բ-ի որդին	Ռուբեն Բ-ն անչափահաս էր ու որոշակի կարճ ժամանակահատվածում երկիրն, ըստ էության, ղեկավարել է նրա մորական պապը՝ Թովման:
7	**Մլեհ**	1169–1175 թթ.	Թորոս Բ-ի եղբայրը	**Բյուզանդացիներից և խաչակիրներից** ազատագրեց երկրի ծովեզրյա շրջաններն ու Տարսոն, Ադանա, Պոմպեապոլիս քաղաքները: 1173 թ-ին պետության մայրաքաղաքը Վահկայից տեղափոխեց Սիս, որը դարձավ Կիլիկյան Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային գլխավոր կենտրոնը:
8	**Ռուբեն Գ**	1175–1187 թթ.	Մլեհի եղբայր Ստեփանեի ավագ որդին	Վերջինիս գահակից եղբայր Լևոնը 1180-ական թվականներին **օտարազգիներից** մաքրեց ծովեզերքը՝ Ալեքսանդրետից Սելևկիա, որը կարևոր նշանակություն ունեցավ երկրի տնտեսական և քաղաքական զարգացման համար: Արտաքին թշնամիներին հաղթելուց հետո Ռուբեն Գ-ն, փորձելով սանձել անջատամետ որոշ իշխանների, 1182 թ-ին պաշարեց Լամբրոնը՝ Հեթումյան հզոր իշխանության կենտրոնը, սակայն գրավել չկարողացավ: Կենտրոնական իշխանության դեմ պայքարում Հեթումյաններն օգնություն խնդրեցին **Անտիոքի դուքս Բոհեմունդից, որը** 1185 թ-ին խաբեությամբ Ռուբեն Գ-ին հրավիրեց Անտիոք և ձերբակալեց: Լևոն Բ-ի ջանքերով գերեդարձ Ռուբեն Գ-ն 1187 թ-ին իշխանությունը կամովին հանձնեց նրան:
9	**Լևոն Բ** (Իշխանապետ, ապա Թագավոր)	1187–1198 թթ.	Ռուբեն Գ-ի կրտսեր եղբայրը	Լևոն Բ-ի իշխանապետության տարիներին (1187–98 թթ.) պետությունը հզորացել է, բարձրացել է նրա միջազգային հեղինակությունը և նախադրյալներ են ստեղծվել թագավորություն հիմնադրելու համար:

էր, իսկ վերջինս, կաթողիկոսության աթոռանիստով հանդերձ, տվյալ ժամանակաճ հատվածում տեղակայված էր Հռոմկլայում, որը գտնվում էր Հալեպի (Այուբյանների) սուլթանության տարածքում:

Ելնելով վերոնշյալ հանգամանքից՝ Մլեհը նախ դաշնակցային հարաբերություններ կառուցեց Հալեպի տիրակալ Նուր ալ-Դինի հետ (1146-1174)՝ շահելով նրա լոյալությունն իր տարածքում գործունեություն ծավալող այլ կրոնական միավորի նկատմամբ:

Հետագայում դաշնակցային հարաբերություններ ձևավորվեցին նաև տարա-

[6] Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 5, Երևան, 1979, էջ 407-414:

ծաշրջանի մահմեդական այլ պետական միավորների հետ, որը, իհարկե, առաջացրեց տարածաշրջանի նորաստեղծ խաչակրաց պետությունների, քրիստոնյա Արևմուտքի և Բյուզանդիայի դժգոհությունը, քանի որ նրանք Կիլիկիայի իշխանապետությունը դիտում էին որպես իրենց դաշնակից և վստահելի հենարան տարածաշրջանում՝ նախ և առաջ հենց կրոնական բաղադրիչից ելնելով:

Պատմությունը ցույց տվեց, որ ապագայում ստեղծվող թագավորության հիմքերի ամրապնդման առումով, Մլեհի արտաքին քաղաքականության վեկտորների այդպիսի էական փոփոխությունը տվեց իր արդյունքը, և ընդամենը երկու տասնամյակ անց Կիլիկիայի իշխանապետությունը վերածվեց թագավորության: Եվ դա այն պարագայում, երբ առկա էր արտաքին խաղացողների տեսակարար կշռի ակտիվ հակազդեցությունը:

Ներքին և արտաքին միջավայրեր

Այս հատվածում խոսելու ենք Կիլիկիայի իշխանապետության/թագավորության կայացման ժամանակաշրջանում ներքին և արտաքին միջավայրերի ձևավորման, հիմնական «խաղացողների» և վերջիններիս ներգործության մասին:

Ա. Ներքին միջավայր. Հայ առաքելական եկեղեցի, շահերի համընկնում

Կիլիկյան իշխանապետության ծննդյան և կայացման ժամանակաշրջանի դասերը, հատկապես ներքին միջավայրի բաղադրիչների բացահայտման և վերլուծության առումով, ամբողջական չեն լինի, եթե չդիտարկվեն հայոց եկեղեցու տեղն ու դերը, ինչպես նաև նրա կողմից իրականացվող քաղաքականությունը տվյալ ժամանակաշրջանում:

Չթերագնահատելով եկեղեցու դրական և կարևոր դերակատարումը Կիլիկիայի իշխանապետությունում/թագավորությունում և, որպես պետական միավոր, վերջինիս կենսագործունեությունը տարբեր բնագավառներում (պատմագրություն, ճարտարապետություն, մշակույթ, մանրանկարչություն, դպրություն և այլն) արձանագրված առաջընթացի ու վերելքի ապահովմանը օժանդակելու գործում, այդուհանդերձ, փորձենք վերլուծել նրա կողմից ընտրված սկզբունքների «փաթեթի» արդյունավետության աստիճանը՝ պետականակերտման և ազգապահպանման դիտանկյունից:

Միաժամանակ, նույն դիտանկյունից փորձենք գնահատել եկեղեցու փոխհարաբերությունների արդյունավետությունը Կիլիկյան Հայաստանի ու Բյուզանդիայի տիրապետող վերնախավերի, ինչպես նաև այլ կրոնական միավորների հետ՝ ցույց տալով նրա ընկալումներն ու դրանցից բխած քայլերի տրամաբանությունը դարակազմիկ ու ճակատագրական ելքերի պարագայում՝ թելադրող և տարածաշրջանի պետական-քաղաքական քարտեզը ձևավորող «հիմնական խաղացողների» ծրագրերի նկատմամբ:

Շշեղվելով թեմայից ու չծանրանալով Բագրատունիների հայկական թագավորության անկման ժամանակ (1045 թ.) հայ եկեղեցու դերակատարման վրա՝ արձանագրենք, որ պետականության կորստից հետո հատկապես սելջուկ թուրքերի սպասվելիք ռազմական արշավանքներից խուսափելու նպատակով թագավորության սահմաններում ապրող Հայ առաքելական եկեղեցու (այսուհետ՝ ՀԱԵ) հետևորդ հավատավոր հայերի համար սկսվեց պարտադրված արտագաղթի ծանր փուլը: Օբյեկտիվ իրականությունից բխող այս գործընթացն անմիջականորեն ներազդեց մասնավորապես՝ քրիստոնեական կրոնի առաքելական ուղղությունը որդեգրած եկեղեցու հետագա կենսագործունեության սկզբունքների վերանայման, վերաձևակերպման և դրանց իրականացման տեսանկյունից: Քանի որ եկեղեցական կառույցի պահպանման ծախսերում ժողովրդական ներդրումների բաղադրիչ-գործոնի ազդեցությունն էական էր, հետևապես՝ ՀԱԵ վերնախավի համար չափազանց մտահոգիչ էր այն հանգամանքը, որ պետականության կորստից հետո պապենական հողերից սկսեց հեռանալ հավատացյալ ժողովրդի որոշիչ հատվածը՝ փորձելով գոյաբանական անվտանգային միջավայր փնտրել հարևան Վրաստանում, Բյուզանդիայում, Դաշտային Կիլիկիայում ու

դրան հարող Միջերկրական ծովի առափնյա տարածքներում, որտեղ տարբեր ժամանակահատվածներում արդեն իսկ ձևավորվել էին քրիստոնեական տարբեր ուղղություններ դավանող հայ համայնքներ:

Օբյեկտիվ արտագաղթը (միգրացիան), նախ և առաջ, սպառնում էր եկեղեցական կառույցի համակարգված գոյության խարխլմանը, և այդ նույն ՀԱԵ վերնախավը հասկանում էր, որ իր տեղական կառույցներն առերեսվելու են ոչ միայն հավատավոր մի շարք համայնքների կորստյան դառը իրողության հետ, այլև բախվելու են իրենց կառույցում ծառայող հոգևորականների կենցաղային ծախսերը հոգալու խնդրին: Այսինքն՝ միգրացիայի հետևանքով տվյալ տարածքներում դադարելու էր գոյություն ունենալ եկեղեցու պահպանման ծախսերի ֆինանսավորման հիմնական աղբյուրը՝ հավատավոր հայ համայնքը: Այսպիսով՝ ՀԱԵ վերնախավի համար սկիզբ առավ խնդրի լուծման փնտրտուքների ու դեգերումների ծանր ժամանակաշրջանը: Իրավիճակը բարդանում էր նաև նրանով, որ պետականության անկումից հետո ժողովրդի հոգևոր ու քաղաքական ուժերի հիմնական, եթե ոչ միակ հենարանը մնում էր եկեղեցին, ինչը, բացի իրավունքներից, պատասխանատվության ու պարտավորությունների ծանրագույն չափաբաժին էր ավելացնում վերջինիս համար: Սակայն, եկեղեցական կառույցի գերակայությունների տիրույթում ավելի շատ սեփական իրավունքներն էին, քան պարտավորությունները, ու այդ սկզբունքը գործում է մինչ օրս: Հաջորդ կարևոր հանգամանքը, որ արդեն դուրս էր պահպանման ծախսերի կենցաղային շրջանակից, սպառնում էր քրիստոնեության առաքելական ուղղության ինստիտուտի գոյաբանական խնդրին: Բանն այն է, որ օբյեկտիվ պատճառներով մնալով առանց պետական բարձր հովանավորության, ՀԱԵ-ն հարևան երկրների, հատկապես ուղղափառ Բյուզանդիայի կողմից վարվող քաղաքականության համատեքստում դառնում էր թիվ մեկ թիրախը: Դեպքերի զարգացման այս սցենարը, անշուշտ, կանխատեսելի էր, քանի որ դարերի ընթացքում Բյուզանդիայի հոգևոր թևը միշտ էլ ձգտել էր ՀԱԵ-ն բերել իր ազդեցության տիրույթ և կաթողիկոսությունը հնազանդեցնել Կոստանդնուպոլսի պատրիարքարանի աթոռին՝ միաձուլելով ուղղափառ եկեղեցուն: Եվ եթե այդ գաղափարը հայկական թագավորությունների կայուն գոյության ժամանակաշրջանում շուրջ 6 դար հանգիստ չէր տվել Բյուզանդիայի կայսրության հոգևոր թևին, ապա տրամաբանական էր, որ արդեն իսկ թագավորական բարձր հովանուց զրկված ՀԱԵ-ի պարագայում նա անցնելու էր իր վաղեմի երազանքի իրականացման գործնական փուլին:

Այս ամենին զուգահեռ, հայտնվել էին նաև խաչակիրները, որոնց հիմնական «գործատուն» կաթոլիկ Վատիկանն էր, և ՀԱԵ-ն պարզապես հայտնվել էր գոյաբանական «մամլիչ» խաչմերուկում:

Արդյունքում, սելջուկ-թուրքական վտանգը, հավատացյալ ժողովրդի հարկադրական արտագաղթը, Բյուզանդիայի ուղղափառ եկեղեցու հարձակողական քաղաքականությունը և «խաչակրաց գաղափարախոսությունը» ՀԱԵ-ին ստիպում են ընդունել ծանր որոշում. հայոց հայրապետական աթոռը, որն այդ պահին զուրկ էր կաթողիկոսից, տեղափոխվում է դեպի հարավ՝ թշնամուց հեռու հայաշատ վայրեր, նախ՝ Կապադովկիա, այնուհետև Կիլիկիա:

Միաժամանակ, ՀԱԵ վերնախավը, փորձելով խուսանավել բյուզանդական կրոնական ճնշումից, որն ամեն կերպ խոչընդոտում էր տվյալ ժամանակահատվածում կաթողիկոսական ընտրության անցկացումը, ընդունում է ևս մեկ հայեցակարգային որոշում, որը թեև եկեղեցապահպանության տեսանկյունից տրամաբանական էր, սակայն վիճարկելի էր հոգևոր վերնախավի և նրա դասային աստիճանակարգի ձևավորման, ինչպես նաև հայրապետական աթոռին բազմողի կերպարի ընտրության սկզբունքների փոխշաղկապվածության ու գործնական կիրառելիության առումով: Առավել ևս, այդ որոշումը շատ հեռու էր ազգապահպանության ծիրից ու ենթադրում էր բոլորովին նոր մոտեցում, որն ինչ-որ տեղ նաև ստվեր էր գցելու առաքելականություն դավանող հայոց եկեղեցու հիմնարար ու դարերով

անփոփոխ սկզբունքների վրա:

ՀԱԵ ինստիտուտի պահպանման հովանավորի և կաթողիկոսի կերպարի երկար փնտրտուքից հետո եկեղեցական վերնախավն ընդունում է «երկուսը՝ մեկում» դարակազմիկ որոշում, որի արդյունքում հայոց կաթողիկոսական աթոռը սիրահոժար կերպով տրամադրվում է Պահլավունիների տոհմին (միջնադարյան հայ ազնվական իշխանական ընտանիք)[7]: 1066 թվականին Լեռնային Կիլիկիայի Ծամընդավ բերդաքաղաքում գումարվում է եկեղեցական ժողով, որտեղ ամրագրվում է սույն իրողությունը, և նոր կաթողիկոս է ընտրվում Հարավային Հայաստանի և Միջագետքի կուսակալ Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամը, որը, որպես կաթողիկոս, ստանում է Գրիգոր Բ Վկայասեր անունը[8]:

Ընդհանրապես, Վահրամ Պահլավունին շատ հետաքրքրական պատմական կերպար է, և, ինչպես ցույց է տվել ժամանակը, իրոք փոխզիջումային թեկնածու՝ թե՛ Բյուզանդիայի և թե՛ դեռևս գոյություն ունեցող հայկական փոքր թագավորությունների վերնախավի համար: Հենց այս կերպարի ընտրությամբ էր պայմանավորված, որ ՀԱԵ-ն էական զիջումների գնաց դարերով ամրագրված իր ինստիտուցիոնալ սկզբունքների շարունակականության ապահովման առումով՝ մերժելով ավանդական կանոնակարգը ու ընտրելով հեղափոխական փոփոխությունների ճանապարհը:

Բանն այն է, որ Կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերը, նույն ինքը՝ նախկին աշխարհիկ Վահրամ Պահլավունին, մինչ հոգևորական դառնալը բյուզանդական պաշտոնյա էր եղել և զբաղեցրել Միջագետքի դքսի պաշտոնը[9]: Ասել է թե, եկեղեցական վերնախավի թողտվությամբ ՀԱԵ կաթողիկոսական աթոռին չբազմեց կուսակրոն քահանա կամ, այսպես կոչված, «եկեղեցական դպրոց» անցած հոգևորական (պատմիչ Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ՝ Վահրամը նախկինում նույնիսկ ամուսնացած էր եղել)[10]: Հաջորդ իրողությունն այն էր, որ Գրիգոր Բ Վկայասեր Կաթողիկոսի աթոռակալությամբ, ըստ էության, վերանայվեց հայոց կաթողիկոսների հաջորդականության՝ մինչ այդ գոյություն ունեցող անխախտ սկզբունքը, և կաթողիկոսական աթոռն այդուհետ համարվեց ժառանգական. Պահլավունիների տոհմը ՀԱԵ կաթողիկոսական աթոռի ժառանգական փոխանցման գործընթացն ապահովեց շուրջ մեկ ու կես դար:

Սրանք փաստեր են, որոնք ցուցադրում են, որ ՀԱԵ համակարգի պահպանման համար եկեղեցական վերնախավը դիմեց մի քանի չափազանց կարևոր սկզբունքների վերափոխման ու վերաձևման, որոնք, ըստ էության, առավել աշխարհիկ բնույթ հաղորդեցին վերջինիս բուն կրոնական էությանը:

Պետական կառավարման համակարգում ծառայած Վահրամ Պահլավունու՝ արդեն որպես կաթողիկոս իրականացրած գործնական քայլերը ցույց են տալիս, որ համակարգային մտածելակերպը հնարավորություն է տվել նրան գիտակցելու պետական միավորի՝ իբրև ՀԱԵ կենսունակության երաշխավորի կարևորությունը՝ այս առումով ապահովելով շահերի համընկնում. եկեղեցական հարստությանն ու հայրապետական աթոռին տիրող Պահլավունիների տոհմը դառնում է Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ Ա-ի թիկնապահ Ռուբենի պետականաստեղծ նախաձեռնության թիվ մեկ շահառուն: Այս քաղաքականությունը, սակայն, ավելի շատ ինքնապահպանության բնազդի արտահայտում էր և ավելի քիչ աղերս ուներ ազգապահպանության խնդրի հետ: Ուստի, եկեղեցու կառուցվածքային օբյեկտիվ ու սուբյեկտիվ «տեկտոնական» շարժերից անկախ, Ռուբեն իշխանի իշխանապետության նախագիծն անձնապես շահեկան էր ՀԱԵ վերնախավի և Պահլավունիների համար:

Կիլիկյան շրջանի ՀԱԵ պատմությունը վերելքների և վայրէջքների ժամանակա-

[7] Ս. Մխիթարյան, Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Երևան, «Լուսակն», 2001, էջ 5:
[8] Տ.Ա. Ներսիսյան, Կաթողիկոսական աթոռի անցումը Պահլավունիներին, «Регион и мир», 2019, №5, էջ 154:
[9] Ս. Մխիթարյան, Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Երևան, «Լուսակն», 2001, էջ 17:
[10] Ա. Հովհաննիսյան, Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երևան, հեղ. հրատ., 2020, էջ 15:

շրջան էր՝ հագեցած իշխանապետության/թագավորության ճակատագրին առնչվող եկեղեցական համաժողովներով, պետություն-եկեղեցի արդյունավետ համագործակցությամբ, հաճախ նաև իշխանական տոհմերի առճակատումների դրվագներով, ներեկեղեցական տեսանելի ու ստվերային հարաբերություններով ու գործարքներով, որոնց նշանակությունն ու ազդեցությունը դեռևս ամբողջապես բացահայտված չեն ոչ միայն պատմաբանների, այլև հենց Հայաստանյայց առաքելական եկեղեցու կողմից: Այդուհանդերձ, ակներև է, որ տվյալ ժամանակաշրջանի ճակատագրական դեպքերի ու դիպվածների նորովի և անկողմնակալ վերհանումը չափազանց անհրաժեշտ է ներկայիս պետության հայեցակարգային խնդիրների դասակարգման ու կառավարման տեսանկյունից, հատկապես, որ երկիշխան (Էջմիածին և Անթիլիաս) եկեղեցին շարունակում է մնալ Հայաստանի ներքին միջավայրի կարևոր բաղադրիչներից մեկը: Այս դեպքում վերջինիս տեղն ու դերը, գործունեությունն ու ներազդեցությունը պետք է գնահատվեն իրատեսորեն, սթափ և օբյեկտիվ կերպով՝ ոչ միայն պետականաշինության, այլև հայի տեսակի ու ազգի միասնականության պահպանման համատեքստում: Ի վերջո, նախքան հավատավոր հոտ լինելը, հայը ոգեղեն ցեղ է, ազգ, որն աներկբայորեն իր առաքելությունն ունի Եվրոպան Ասիային կապող այս տարածաշրջանում:

(շարունակելի)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 5, Երևան, 1979 թ., 704 էջ:
2. Ա. Հովհաննիսյան, Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երևան, հեղ. հրատ., 2020 թ., 218 էջ:
3. Ս. Մխիթարյան, Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Երևան, «Լուսակն», 2001 թ. 165 էջ:
4. Տ.Ա. Ներսիսյան, Կաթողիկոսական աթոռի անցումը Պահլավունիներին, «Регион и мир», 2019 թ., № 5:
5. https://www.academia.edu/28420853/Մանազկերտի_1071_թ_ճակատամարտը:
6. http://www.encyclopedia.am/pages.php?hId=1307

Амазасп ГАЛСТЯН
Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

УРОКИ КИЛИКИИ: ЧАСТЬ ВТОРАЯ

Вторая часть статьи посвящена зарождению и жизнедеятельности княжеского господства в Киликийской Армении. Соответственно, была предпринята попытка представить логическую цепочку глубоких и переломных процессов, происходивших в регионе в данный период.

Регион, где влияние Византийской империи стало значительно ослабевать, уступая место интернациональному объединению особой религиозной направленности и военно-политического характера, известному в истории как «крестоносцы», и осуществляемая ими программа как «Крестовый поход». Целенаправленная деятельность девяти крестовых походов в регионе определялась глобальным проектом, разработанным крупными европейскими государствами и конкретными религиозными структурами, что предполагало определенное изменение принципов миропорядка в религиозно-военно-политической и экономической сферах.

В этом контексте, с учетом хронологического фактора, были выделены внешние и внутренние среды, действия которых оказали непосредственное влияние на формирование Киликийского княжества. Деятельность главной влиятельной единицы внутренней среды – Армянской Апостоль-

ской церкви, анализировалась с точки зрения мотивов и принципиальных позиций, направленных на сохранение собственной структуры.

Ключевые слова: *Киликийское княжество, Армянская Апостольская церковь, группы влияния, внешняя среда, внутренняя среда*

Hamazasp GALSTYAN
Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics

THE VISION OF THE ARMENIAN SOCIETY

CILICIA LESSONS: PART TWO

The second part of the paper is devoted to the origin and life of principality domination in Cilician Armenia. Accordingly, an attempt was made to present a logical chain of deep and critical processes that took place in the region during this period.

The region where the influence of the Byzantine Empire began to weaken significantly, giving way to an international association of a special religious orientation and military-political nature, known in history as the "crusaders", and their program as the "Crusade". The purposeful activity of the nine crusades in the region was determined by a global project developed by large European states and specific religious structures, which implied a certain change in the principles of the world order in the religious-military-political and economic spheres.

In this context, taking into account the chronological factor, the external and internal environments were identified, the actions of which had a direct impact on the formation of the Cilician principality. The activity of the main influential unit of the internal environment - the Armenian Apostolic Church was analyzed from the point of view of motives and principled positions aimed at preserving its own structure.

Key words: *Principality of Cilicia, Armenian Apostolic Church, influencing groups, external environment, internal environment*